ՄԱՏԹԵՈՍ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ՋԱՏԱԳՈՎԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Եկեղեցաքաղաքական կացության թելադրանքով ողջ միջնադարում շարադրվել ու լայն կիրառություն են գտել երկեր, որոնց նպատակն է եղել պահպանել Հայ Եկեղեցու դավանական, վարչանվիրապետական ինքնուրույնությունը: Հակաճառական բովանդակություն ունեցող այդ երկերում («Կնիք հաւատոյ», «Արմատ հաւատոյ», «Հաւատարմատ», «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» եւ այլն) գլխավորաբար քննարկվել են երրորդաբանական, քրիստոսաբանական հարցեր: Այս երկերի կողքին անհամեմատ սակավ են այն երկերը, որոնք շոշափում են գլխավորաբար ջատագովական, հավատքային բնույթի խնդիրներ: Զուտ քրիստոնեական ծագում ունեցող այդ ժանրը սկզբնավորվել է Բ դարում (Կողբատոս, Արիստիդես Աթենացի) եւ հրապարակ իջել նորահաստատ քրիստոնեության հավատքային հիմնադրույթների պաշտպանության եւ հաստատման նպատակով: Հայ իրականության մեջ այդ ժանրին պատկանող վաղագույն երկը Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ն է, ուր հեղինակն իր քննադատությունն ուղղում է հույն փիլիսոփաների եւ պարսից մազդեական կրոնի դեմ: Իրրեւ գաղափարաքաղաքական հակազդեցություն՝ ջատագովական բնույթի երկեր շարադրվեցին նաեւ արաբական նվաճումների շրջանում: Դրանց մեջ քննադատվում են Մուհամմեդը, իսլամական հավատի խոցելի կողմերը: Այդ մասին պատմող զրույցների առկայությունը Թովմա Արծրունու, Շապուհ Բագրատունու Պատմությունների մեջ[1] վկայում է, որ դրանք մեզանում տարածված են եղել արդեն նախքան Թ դարը: Դրանք շրջանառության մեջ են գտնվել հետագայում նմանապես: Այսպես, բնորոշ են «Ի Քաշունէն քաղածու» միավորն ու ԺԲ դարավերջի հեղինակ Մխիթար Անեցու Պատմության մեջ առկա «Վասն առասպելաց անաւրէն Մահմէտի եւ նորին ստութեան, զոր խայտառակէ նորին աշակերտն» գրությունը[2]: Իսլամական տիրապետության հետագա դարերում եւս հայ իրականության մեջ չի նվազում ջատագովական ընդդիմության ոգին: Այս բանի ամենաբնորոշ վկաներն են Ս. Գրիգոր Տաթեւացու Հարցմանց գրքի մաս կազմող «Ընդդեմ տաճկաց»[3] երկն ու նրա աշակերտի՝ Մատթեոս Ջուղայեցու հրապարակվող գրությունը: Այս երկը ուրույն տեղ է զբաղեցնում Ջուղայեցու ծավալուն մատենագրական ժառանգության մեջ (մեկնություններ, քարոզներ)[4]: Ձեռագրերում «Վասն հարցմանց անաւրինաց զանա-

1 «Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տան Արծրունեաց ի լոյս էած Ք. Պ[ատրկանեանց]» Ս. Պետերբուրգ, 1887, էջ 99-103, 130, 149, Պատմութիւն Անանուն Զրուցագրի. Կարծեցեալ Շապուհ Բագրատունի. "История Анонимного Повествователя. Псевдо-Шапуха Багратуни", предисловие и комментарии М. О. Дарбинян-Меликян, Е., 1971, ц. 41-47 հմմտ. **Մովսէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, աշխատ. Վ. Առաքելյանի, Եր., 1983, էջ 287-289, «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ» [աշխատ. Ղ. Ալիշանի], Վենետիկ, 1862, էջ 63-66, **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն Հայոց, աշխատ Կ. Մելիք-Օհանջանյանի, Եր., 1961, էջ 56-57:

2 Տե՛ս «Մխիթարայ Անեցւոյ Պատմութիւն», աշխատ. Ք. Պատրկանեան, Ս. Պետերբուրգ, 1878, [Մասն Ա, գլ ԻԵ], էջ 36:

3 Տե՛ս **Բարգէն եպս. Կիւլէսէրեան**, Իսլամը հայ մատենագրության մեջ. Ա. Գրիգոր Տաթեւացւոյ Ընդդէմ տաճկաց, Բ. Ի Քաշունէ քաղածու, Վիեննա, 1930 (այսուհետեւ՝ «Ընդդէմ տաճկաց»):

4 Երկերի քննությունը տե՛ս **Լ. Խաչիկյան**, Մատթեոս Ջուղայեցու կյանքն ու մատենագրությունը, ԲՄ, 3, 1956, էջ 57-84:

զան պատասխանիք, զոր խնդրեալ բարեպաշտին Աբիսողոմայ ի նուաստ ոգոյ Մատթէոս վարդապետի» խորագրով հայտնի այդ երկը, ինչպես նկատում է հեղինակը, շարադրված է Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցում «ընդ խաւսելն մեր ընդ վնասա[կար] եւ պիղծ դանիշմանին Ալի կոչեցելոյն, որ եւ յետոյ նա սպան զԿաթողիկոսն Աիսթամարայ զտէր Զաքարիայ»: Այս տեղեկությունն ինքնին նշանակում է, որ երկը շարադրված է Զաքարիա Կաթողիկոսի աթոռակալությունից՝ 1393 թ. առաջ[5]: Մատթեոս Ջուղայեցու եւ Գրիգոր Տաթեւացու ջատագովական այս գրությունները շարադրված են գրեթե նույն տարիներին՝ 1390-ական թվականներին (ավելի ստույգ՝ առաջինը 1393-ից առաջ, իսկ երկրորդը՝ 1397-ից առաջ): Մատթեոսի գրությունը մի տեսակ ամփոփ տարբերակն է Տաթեւացու «Ընդդէմ տաճկաց»-ի կամ, ժամանակային հնարավոր եւրեւառաջությամբ, Տաթեւացու երկը ընդարձակ տարբերակն է Ջուղայեցու գրության: Նյութի ընդհանրությամբ պայմանավորված՝ շատ հարցեր իրենց փոխադարձ անդրադարձն են գտնում այդ երկերում (հավատքային-դավանաբանական [Երրորդաբանություն, Քրիստոնեություն] սովորութային հարցեր [թլպատում, կերակուրների խտրություն, լվացում, պահք, ծնրադրում դեպ արեւելք]): Ըստ այսմ արձանագրելի են հետեւյալ ընդհանուր տեղիները.

Գրիգոր Տաթեւացի	Մատթեոս Ջուղայեցի
Դարձեալ, ամենայն արհուեստաւոր ի գործոյն իւր ճանաչի, այլ զի Աստուած է ճշմարիտ Քրիստոս, ի գործոցն ճանաչի, եւ նախ զսքանչելիքն գործ Աստուծոյ է, զի ի վեր է քան զբնութիւն: Արդ, դուք ասէք, եթէ քարամաքթար է Յիսէն, այսինքն՝ սքանչելագործ, որ զմեռեալս յարուցանէր եւ զկոյրս լուսաւորէր, ապա ուրեմն Աստուած է Քրիստոս: «Ընդդէմ տաճկաց», էջ 103:	Ասէմք թէ ամենայն արուեստաւոր, մինչ զիւր արուեստն չէ արարել, ոչ ոք ճանաչէ զնա թէպէտ եւ անունն կայ ի նմա, իսկ յորժամ հիսն զուրաքն առեալ տաշէ՝ տեսաք եւ ճանաչեցաք, եւ ասեմք նմա, թէ հիսն է...: Արդ, նոյնպէս եւ Աստուծոյ արուեստ կա, որ զայն տեսանելով ճանաչեմք զԱստուած: Եւ առ որ ոք ոչ զտանուի յարուեստէն՝ ոչ ասեմք նմա Աստուած: Արդ, արուեստն եւ գործն այս է, որ յոչէից իր գոյացուցանէ, եւ անհնարինն հնարաւոր առնէ... Եւ ամենայն տիեզերս գիտեն, որ Քրիստոս զկաղն գնացոյց, զկոյրն լուսաւորեաց, զմեռեալն յարոյց, եւ զամենայն անհնարին հնարաւոր արար, ապա ուրեմն Աստուած ճշմարիտ է:

5 **Լ. Խաչիկյան**, նշվ. աշխ., էջ 65:

Եւ թէ ասեն. եւ մարգարէքն սքանչելիք գործէին, որպէս առաջի փարաւոնի արար Մովսէս: Իսկ Եղիա եւ Եղիսէէ զմեռեալս յարուցին: Նոյնպէս եւ Քրիստոս արար սքանչելիս: Ասեմք, եթէ մարգարէքն այլոց չարութեամբ գործէին, այսինքն՝ Աստուծոյ: Իսկ Քրիստոս ինքնիշխան հրամանաւ... էջ 103-104 Դարձեալ ասեմք՝ թլփատութիւն ոչ է արդարութիւն, այլ՝ նշան յատկութեան, զի որդիքն Աբրահամու որոշեսցին յայլազգեաց, որպէս ոք զոչխար իւր դրոշմէ, զի յատկասցի յայլոցն: էջ 167:	Եւ եթէ ասեն թէ բազում մարգարէք զնոյն արարին զսքանչելիքն, եւ թէ սքանչելեալքն Աստուած է, ապա եւ մարգարէքն Աստուած են: Ասեմք թէ եւ մարգարէքն զնոյն արարին զսքանչելիքն, այլ ոչ որպէս Քրիստոս, զի Քրիստոս ըստ ինքեան իշխան[ական] զաւրութեամբն առնէր... Գիտելի է, զի Աստուած զայս աւրէնքն մին պատճառի համար եդ. յառաջին ժամանակն Աբրահամու ազգին, զի աշխարհս ամէն բոլոր կռապաշտք էին, եւ Աբրահամու ազգին մինակ աստուածապաշտ, վասն այն պատճառին Բ(2) նշան եդ Աստուած իւր հաւատացելոցն, զի բաժանեսցին ի կռապաշտիցն:
Դարձեալ, մեք ոչ թլփատիմք, վասն այն զի բաժանեսցուք ի հեթանոսաց: Այլ դուք, զի թլփատիք եւ ոչ մկրտիք, յայտ է, զի հրէիցն էք հաւասար, որ նալլաթ են ամենայն ազգի: էջ 168	Արդ, ո՞յր համար է թլփատիլն, զի ոչ գոյ կռապաշտ, որ բաժանեցին ի նոցանե, եւ ապա ուրեմն աւելորդ է թլփատիլն, վասն այնորիկ ոչ թլփատիմք: Եւ դարձեալ, քանզի ջհուտ ազգն աստուածապաշտ էր նոցա աւրէնքն Աստուծոյ ընդունելի էր, հիմա ջհուտն նալլաթ է յամէն ազգի միջի...

Ժանրի պահանջով Մատթեոս վարդապետը պախարակում է Իսլամի հակաերրորդաբանական ընկալումները, որոնք նա համարում է «մնացուած ի հերձուածողաց Արիոսի եւ Կերինթոսի, որ ուրանան զԵրրորդական անձնաւորութիւնսն՝ զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին, եւ զՔրիստոսի Աստուածութիւն, եւ զինքն մարգարէ կարդան»: Իսլամի՝ արիոսականության հետ ունեցած կապի այսօրինակ հիմնավորումը գալիս է պատմագրական սկզբնաղբյուրներից: Այնպարակույս Մատթեոս վարդապետը ձեռքի տակ է ունեցել Թովմա Արծրունու, Մովսես Կաղանկատվացու, Գիրակոս Գանձակեցու Պատմությունները: Ըստ այս սկզբնաղբյուրների՝ մուհամմեդականության դավանանքային հիմնադրույթը «եթէ ոչ գոյ բնութեամբ որդի Աստուծոյ»՝ սերում է արիոսական վանական Սարգիս Բհիրայի վարդապետությունից: Մուհամմեդը տվյալ վարդապետության մասին այդ վանականից իմացել է վաճառականական գործերով Եգիպտոսում եղած ժամանակ[6]: Իսկ «Կերինթոս» անվամբ, ինչպես երեւում է, հեղինակը նկատի ունի գնոստիկյան հոսանքի նախակարապետ Կերինթոսին, որ ըստ ավանդության, ապրել է առաքյալների ժամանակ (Ս. Իրինեոս, Ս. Հիպպոլիտոս): Ըստ նրա՝ Քրիստոս եւ Հիսուս տարբեր անձեր են: Եթե Հիսուս սովորական մահկանացու էր, որ հասել էր բարձրագույն առաքինության, ապա Քրիստոս մկրտության

6 Տե՛ս «Թովմայի վարդապետի Արծրունոյ պատմութիւն տանն Արծրունեաց», էջ 99:

ժամանակ Հիսուսի վրա աղավնու կերպարանքով իջած եւ նրան միացած երկնավոր էակ է: Քրիստոսի շնորհիվ է, որ Հիսուս կատարում է հրաշքներ[7]: Ըստ երեւույթին Ջուղայեցին ակնարկում է Հիսուս Քրիստոսի անձի երկփեղկման մասին Կերինթոսի ուսմունքը:

Մատթեոս Ջուղայեցու փիլիսոփայական մտածումները ընդհանրության ինչ-ինչ եզրեր ունեն անցյալի հայրախոսական վաստակի հետ: Այսպես, Մատթեոսը նկատում է, որ թեպետ Աստված կարող էր չքացնել, անէացնել սատանային, սակայն որպեսզի կատարվեր արդարությունը եւ մարդը, որ պարտություն էր կրել նրանից, պարտության մատներ նրան, հարկ եղավ Բանի մարմնացման եւ մարդացման. «զի թէ Աստուած էր, որ մարդ է եղեալ. ոչ մերձենայր առ Քրիստոս եւ անկոխ մնայր»: Այս պատճառով «Բանն Աստուած ծածկեաց զինքն մարմնովն որպէս ձկնորսք զկեռն մսով ծածկեն, զոր ոչ իմացեալ սատանայի ըմբռնեցաւ ի Քրիստոսէ, որպէս ձուկն ի կէռէն, եւ կոխեցաւ ի նմանէ եւ ազատեացն զերիքն, որ յԱդամայ»: Այս մտածումն ընդհանրության եզրեր ունի Ս. Գրիգոր Նյուսացու վարդապետության հետ: Այսպես, համաձայն Նյուսացու՝ քավության մասին ուսմունքի՝ «չնկատելով կամ թերագնահատելով Քրիստոսի մեջ առկա Աստվածության անդրանցական հզորությունը՝ սատանան խաբվում է մարդկային տկար մարմին հագած Քրիստոսի առերեւույթ թուլությամբ»[8]: Անշուշտ, այս չի նշանակում, թե Մատթեոս վարդապետը գիտակցված կերպով օգտվել է նրա ժառանգությունից. խոսքը բացառապես վերաբերում է աստվածաբանական մտածողության եղանակին:

Իսլամի դեմ շարադրված այս գրության մեջ օգտագործված են օտարալեզու բառեր, արտահայտություններ, որոնք են.

Բուխթան = Բախթան (պրս. بختن) - պարտություն կրել, պարտվել, տանուլ տալ, կորցնել:

Դանիշման = Դանիշմենդ (պրս.-թրք. دانشمند) - գիտուն, իմաստուն, հմուտ:

Թաղլուխը աղավաղումն է «Դեղալ»ի կամ «Դաղալ»ի (արբ.-թրք. دغل) - նենգություն, խարդախություն:

Թավրեթ = Թեւրաթ (արբ.-թրք. توراة) - Աստվածաշունչ, Հին Կտակարան:

Ինջիլ (արբ.-թրք. انجيل) - Ավետարան:

Հիլաթ=Հիլէ (արբ.-թրք. حيلة) - նենգ, նենգություն, խարդախություն:

Մսաֆ (արբ. مصحف) – հատոր, գիրք:

Նալլաթ = Նալլեթը աղավաղումն է «Լանեթ»ի (արբ.-թրք. لعنت) - անեծք, անիծյալ, խստաբարո:

Նաւֆան աղավաղումն է «Նեֆես»ի (արբ.-թրք. نفس) - հոգի, անձ, կամք, ցանկություն:

---

7 Տե՛ս **Вл.С. Соловьев**, Керинф-Христианство: Энциклопед. Словарь, т. 1, М., 1993, էջ 727: Ի դեպ, Յովհան Օձնեցին անունը հիշատակում է ի թիվս նշանավոր աղանդավորների («նախահաւաքումն Պատմութեան այսմ բանից տեսռն Յովհաննու Վերլուծանողի» [տե՛ս Մատենագիրք Հայոց, հտ Է, Անթիլիաս, 2007, էջ 157 (15)]), իսկ Զաքարիա Զագեցին՝ Մուհամմեդին նախորդող աղանդավորների շարքում. «Նորին Զաքարիայի Մեծի երեքշաբաթոջ աւուրն արբադրութիւն» [տե՛ս Մատենագիրք Հայոց, հտ. Թ, Անթիլիաս, 2008, էջ 112 (33)]:

8 **Ն. Քյոսեյան**, Եկեղեցու հայրեր, վարդապետներ, IV – VIII դդ., Եր., 2007, էջ 129:

Ռուհ (արբ.-թրք. روح) - հոգի:

Ռուհ Ալլահ (روح الله) - Սուրբ Հոգի:

Սահաթ (արբ.-թրք. ساعت) - ժամ, ժամանակ:

Սիւննաթ (արբ.-թրք. سنت) - 1. Մուհամմեդի խոսքերը եւ գործերը, 2. թլպատություն:

Վարաղն աղավաղումն է «Ֆուրդան»ի (արբ.-պրս.-թրք. فرقان) - 1. չարն ու բարին իրարից տարբերող, 2. բարոյական չափանիշ, 3. Ղուրան, 4. Աստվածաշունչ:

Փեշուա աղավաղումն է «Փիշվա»ի (պրս. پیشوا) - առաջնորդ:

Փէղամբար = փէյղամբար = փէյղամպէր (արբ.-պրս.-թրք. پیغمبر) - Մարգարե:

Փիշ (պրս. پیش) - առաջ, առջեւի, դեպի առաջ:

Փիշահենկ (պրս. پیشآهنگ) - 1.ռահվիրա, առաջնորդություն, առաջավոր դեր, առաջապահք:

Քէլիմաթ (արբ.-թրք. كلمات եզ. كلمه) - բառեր:

Քուֆր (արբ.-թրք. كفر նաեւ քյաֆիր كافر) - 1. ուրացում, ուրացող, 2. անհավատություն, անհավատ, 3. հայհոյանք[9]:

* * *

Բնագիրը հրատարակվում է ըստ Մաշտոցի անվան Մատենադարանի հեպտեւեալ ձեռագրերի.

A=3854

Ժողովածու: Ժամանակ՝ 1471 թ.: Վայր՝ Սոկութլու գյուղ (երկիր Շարվանա): Գրիչ՝ Հակոբ երեց: Սրացող՝ Ասրվածատուր երեց: Թերթ՝ 310: Նյութ՝ թուղթ: Մեծություն՝ 16*11: Գրություն՝ միասյուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 18: Բնագիր՝ թ. 295ա-308ա:

B=795

Ժողովածու: Ժամանակ՝ 1618 թ.: Գրիչ՝ Եղիազար (2ա-191ա), Գասպար (191բ-369բ): Թերթ՝ 371: Նյութ՝ թուղթ: Մեծություն՝ 26,3*19,5: Գրություն՝ միասյուն (2ա-192բ) (289ա-369բ), երկսյուն (193ա-288բ): Գիր՝ բոլորգիր: Տող՝ 28-29: Բնագիր՝ թ.2ա-7ա:

C=969

Ժողովածու: Ժամանակ՝ 1720-21 թթ.: Վայր՝ Երուսաղեմ: Գրիչ՝ Աբրահամ Կրեպացի: Թերթ՝ 237: Նյութ՝ թուղթ: Մեծություն՝ 22*16,5: Գրություն՝ երկսյուն: Գիր՝ նոտրգիր: Տող՝ 29: Բնագիր՝ թ.107բ-112բ:

ՀԱԿՈԲ ՔՅՈՍԵՅԱՆ
Փիլիսոփայական գիտությունների դոկտոր

9 Արաբատառ համարժեքների արձանագրումն ու համակարգչային շարվածքը կատարել է թուրքագետ Անի Ավետիսյանը:

ՄԱՏԹԷՈՍ ՋՈՒՂԱՅԵՑԻ

ՎԱՄՆ ՀԱՐՑՄԱՆՑ ԱՆԱՒՐԻՆԱՑ ՁԱՆԱՁԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԻՔ, ՁՈՐ ԽՆԴՐԵԱԼ ԲԱՐԵՊԱՇՏԻՆ ԱԲԻՍՈՂՈՄԱՅ Ի ՆՈՒԱՍՏ ՈԳՈՅ ՄԱՏԹԵՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԷ

Յաստուածային գիրսն[1] գրեալ է, թէ՝ «Պատրաստեցէք տալ պատասխանի ամենայնի, որ խնդրիցՀ[2] է զբանն, որ է վասն յուսոյն ձերոյ[3*]: Եւ ամենայն քրիստոնէի պարտ է զայս[4] չափաւոր պատասխանիսն[5] ուսանել, զի մի՛ ասիցեն անաւրէնին, թէ տգետք իցեն[6] եւ անգիտութեամբ կորնչին, զոր եւ բազում անգամ նախատեն զքրիստոնեայսն այսպիսի նախատանաց[7] բանիւ այլազգիքն: Եւ զի յառաջին ժամանակին[8] հերձուածաղք շատ կային, զորս կորոյս նախախնամութիւն Աստուծոյ վասն ծուլութեան ժամանակիս, զոր[9] ոչ են կարաղ ընտրել զչարն ի բարոյն[10]: Միայն Տաճիկ ազգն է ի մի մերում ժամանակիս[11], որ է մնացուած ի հերձուածողաց Արիոսի եւ Կերինթոսի[13] անձնաւորութիւնսն[14]՝ զՀայր եւ Զորդի եւ զՍուրբ Հոգին, եւ Քրիստոսի Աստուածութիւն, եւ զինքն[15] մարգարէ կարդան, եւ այլ բազում չարիս առնեն, յորոյ եւ զսակս ի բազմաց գրեցից[16] զպատասխանին[17] նոցա, զոր արարուք ի դրան Սրբոյ խաչին ի կղզոջն Ախթամարայ, ընդ խաւսելն մեր ընդ վնասա[կար] եւ պիղծ դանիշմանին Ալի կոչեցելոյն, որ եւ յետոյ նա սպան զկաթողիկոսն Ախթամարայ զտէր Զաքարիայ: Եւ զայս վասն այն գրեմք[18], զի իմասցին զանաւրէնութիւնս իւրեանց, եւ կամ զմեզ անպատրաստ թողցին:

Առաջին հարցումն[19] այս է, թէ՝ Դուք Աստուծոյ Հայր եւ Որդի ասէք: Եւ քուֆր ասեն ի վերայ մեր, թէ հայոց ազգն յԱստուծոյ կին առնուլ[20] հաւատան եւ որդիս ծնանել:

Պատասխանի[21]. Որոց [22] եւ իմաստնաբար պատասխանեսցուք[23]: Նախ զայն[24], թէ ամենեին հեռի եմք այդմ հերձուածոյդ[25], եւ ոչ ի մերս[26] եւ ոչ յայլ[27] քրիստոնէից ի միտս ոչ է անցեալ[28] այդ, թէ Աստուած կին լինի առնուլ[29]: Բայց խոստովանիմք Որդի Աստուծոյ լինի յառաջ քան զստեղծանել մարդոյն առանց արուի եւ իգի, զի այս մարմնոյ է ծնունդ եւ ոչ Աստուծոյ[30]: Եւ թէ ասեն՝ Զիա՞րդ լինիցի[31] այդ, ասեմք, թէ ամենայն[32] անհնարինքն հնարաւորք են Աստուծոյ[33]: Եւ ի մէջ մարդկան բազում կերպիւ որդի[34] ասեն առանց հաւր[35] եւ մաւր ծնանելոյ, որպէս այնոքիկ որ զայլոց զաւակ իւրեանց որդիս անուանեն վասն ամլութեան իւրեանց, եւ զիւրեանց հայրենիքն նմա գրեն եւ տան: Եւ այս դատաստանս[36] ընդունելի է յամենայն ազգս: Եւ որք արուեստս[37] ուսուցանեն մանկանց, նոցա հայրք[38] կոչին, եւ մեք Հոգւոյն, որ ի մարդս է[39], Հայր ասեմք, եւ Բանն, որ ի նմանէ[40] յառաջ գայ՝ Որդի: Եւ ամենայն մարգարէքն Աստուծոյ Հայր անուն ասէին եւ Աստուծոյ[41] հաւատացելոցն՝ որդի, որպէս Մովսէս ասէ ի Թավրէթն. Ոչ սա ինքն է հայր քո, որ արարն զքեզ եւ ստեղծ զքեզ[43]: Եւ այն որդին, որ ի մաւրէ եւ ի հաւրէ[44] ծնանի, այն մարմնաւոր է: Իսկ Աստուած անմարմին բնութիւն

---

* *Աղբյուրներ*
Ա Պետ. Գ 15:
A=ՄՄ, ձեռ. 3854, թ. 295ա-308ա
B=ՄՄ, ձեռ.795, թ. 2ա-7ա
C=ՄՄ, ձեռ. 969, թ. 07 բ-112բ

է. այս չորիցս չի նմանիլ, այլ միոյն նմանի, այսինքն[45]՝ մարդոյ[46] մտացն եւ բանին[47], վասն զի մարդն Աստուծոյ պատկեր է մտաւքն եւ բանիւն, վասն որոյ Աստուծոյ նմանի[48]: Եւ զԱստուած առանց բանի՝ մունջ եւ անասուն, եւ ոչ կռապաշտքն չեն[49] խոստովանիլ, այլ ամենայն ազգ խոստովանին զԱստուած բանական լինել[50]: Եւ երբ Բան[51] ունի, մեք Աստուծոյ Հայր ասեմք եւ իւր Բանին՝ Որդի: Զայս[52] վասն այն պատճառին[53] ասեմք, որ Աստուծոյ Բանն մարդոյ[54] բանին չէ նման, որ երբ ի մտացն ծնանի փուք դառնայ[55] եւ յաւդս[56] կորնչի, եւ այս աւուրն այնչափ եւ անթիւ: Իսկ[57] Աստուծոյ Բանն մի է եւ կենդանի եւ անձնաւոր եւ իւրեան նման եւ միածին եւ ոչ բազմածին, այլ Աստուած յԱստուծոյ ծնեալ, եւ անբաժանելի ի նմանէ եւ այս ոչ ժամանակս, այլ յառաջ քան զյաւիտեանս, զորոյ սկիզբն ոչ ոք յարարածոցս[58] գիտեաց[59]՝ ո՛չ հրեշտակք[60], եւ ո՛չ մարդ, եւ վասն այնորիկ[61] Որդի Աստուծոյ ասեմք Բանին Հաւր, եւ յայն[62] անձնաւորութիւն Բանին Աստուծոյ ոչ գրաւի[63] ի գիրս. զի անբովանդակելի է բնութիւն նորայ: Եւ թէ ասեն, թէ ընդէ՞ր ապա[64] ամենայն մարգարէիցն գրոցն Աստուծոյ Բան կոչեն. եւ[65] այն զի՞նչ[66] է: Ասեմք, եթէ ոչ է Բանն Աստուծոյ[67] տկար, որպէս զմերս, որ ոչ ունի զաւրութիւն, այլ զաւրութիւն Բանին Աստուծոյ անչափ է, կարաղ է անձնաւորութիւն Բանին Աստուծոյ անգրելի մնալ եւ յիւր[68] զաւրութիւն միանա ի գիրս եւ ի միտ մեր: Զոր աւրինակ արեգական զաւրութիւն եւ[69] բոլորակութիւն. ոչ ոք կարէ առնուլ ի ծոց իւր[70], այլ զլոյսն ամենայն արարածք կրեն, եւ[71] մի եւ նոյն լոյսն արեգականն իջանէ ի ջուրս[72] եւ այլ նորագոյնս[73] շողս երեւեցուցանէ: Այսպէս է Բանն Աստուծոյ. Ինքն առ Աստուած մնալով կարաղ է զամենայն գիրս լնուլ եւ զմիտս մարդկան յիմաստնացուցանել եւ ի միտս մարդկան իջանէ եւ ի բերանոյ մարդկան[74] զանազան շնորհս բղխէ: Եւ վասն Որդւոյն այսքան առ այս:

Իսկ եթէ հարցանեն վասն Հոգւոյն, թէ Հոգին ի՞նչ է, որ ընդ Որդւոյն եւ զՀոգին յիշէք: Ասեմք թէ՝ որպէս Բանին Աստուծոյ Որդի[75] ասացաք[76] եւ ցուցաք, նմանապէս եւ կենդանութեան Աստուծոյ Հոգի ասեմք, եւ ամենայն ոք զԱստուած կենդանի հաւատայ եւ ոչ մեռած: Արդ, եթէ գոյ յԱստուած կենդանութիւն՝ գոյ եւ հոգի, զի «հոգին է կենդանարար՝ մարմինն ինչ ոչ աւգնէ»*: Եւ զայս[77] ի պատկերէն Աստուծոյ պարտ[78] է ուսանել[79], զի որպէս մարդ առանց հոգւոյ ոչ է կենդանի[80], նոյնպէս եւ Աստուած առանց Հոգւոյ չէ կենդանի[81]: Եւ զայս եւս[82] ամեն ոք գիտէ, որով եւ[83] կենդանի է իւր կենդանութիւն յիւրմենէն[84] անբաժանելի է, սոյնպէս[85] եւ Հոգին Աստուծոյ է կենդանութիւն Աստուծոյ եւ ի նմանէ անբաժանելի է[86]: Եւ զայս[87] Գ (3) անձինքս, որ ասացաք, ոչ եթէ մեր մտացս սուտ բանք եմք[88] ծնեցուցեալ, եւ բուխթան[90] ասեմք ի վերայ Աստուծոյ, այլ ինքն է յայտնել զիւր բան[91] ի ձեռն մարգարէիցն: Եւ գրեալ է ամենայն գիրս նոցա, զի Գ (3) են եւ մի: Եւ այսպէս աւրինակ շատ են[92], զի բնութիւն եւ Աստուածութիւն եւ զաւրութիւն մի են եւ անձինք Գ (3): Եւ զայս, որ յանձն ասեմք մի՛ ուրիշ ուրիշ իմանալ բաժանմամբ, որպէս Գ (3) մարդ, այլ[93] որպես մարդն, հոգին եւ բանն, եւ երեքեան մի մարդ ասին, եւ Գ (3) են եւ մի[94]: Եւ որպէս արեգականդ բոլորականութիւն են իւր լոյսն եւ տաքութիւն, որ ի մեջ լոսոյն Գ (3) են, եւ մի արեգակ[95] է: Եւ կամ[96] որպէս մի խնձոր է բոլոր, եւ[97] է կարմիր եւ է քաղցր, Գ (3) են, եւ մի են[98]: Եւ սոյնպիսի աւրինակքն շատ են յարարածս[99] Աստուծոյ: Եթէ ոք բանիւ անհասկանալի լինի՝ աւրինակաւ ցուցէք[100], որ սակաւ ինչ հասու լինիք: Եւ մեք թէ զամենայն գիրս ասպուածեղէն[101] վկայութեամբ գրեմք ասպ[102]՝ տաղտկութիւն[103] տայ լսելեացն եւ ժամանակիս չէ գործ[104]:

* Յովհ. Զ.64:

Երկրորդ՝ հարցանեն[105] զմեզ, թէ Քրիստոսի ինչ ասէք: Ասեմք, թէ՝ զայն ասեմք, որ ի մեր գիրս գրած է, դուք ոչ հաւատացիք, ապա զայն ասեմք[106], որ ի ձեր գրերն[107] գրած է, զայն, որ ի ձեր մսաֆն[108] գրած է ի ԻԷ (27) վարաղն, թէ Յիսէ Ռաւհ Ալլահն եւ Քալիմաթու[109]: Եւ թէ ասեն, թէպէտ Ռաւհ ասեմք՝ չէ յԱստուծոյ լուսոյն: Ասեմք, թէ Աստուած Ե (5) ազգ լոյս ստեղծ[110]. նախ՝ հրեշտակք եւ դեւք, երկրորդն՝ հոգիս[111] մարդկան, երրորդն՝ արեգակն եւ լուսին եւ աստեղք, չորրորդ՝ կրակի լոյսն եւ լուս[112] ճրագի, հինգերորդ՝ լոյս աչաց կենդանեաց: Արդ, զատ ի սոցանէ այլ լոյս ոչ գոյ[113] ստեղծուած[114] յԱստուծոյ: Եւ սոքա Աստուծոյ լոյս ոչ են եւ ոչ ասին: Իսկ եթէ սոքա[115] Աստուծոյ լոյս են, ապա կրակն եւ դեւք Աստուծոյ լոյս ասել քուֆր է խիստ[116]: Իսկ Քրիստոսի Աստուծոյ լոյս ասէ ձեր գիրքն, որ հեռի է յայս արարած լուսոյս: Արդ, եթէ յԱստուծոյ լուսոյն[117] է, ապա ճշմարիտ Աստուած է, եւ եթէ ասեն, թէ[118] յԱստուծոյ լուսոյն է, ապա Աստուած չէ: Ասեմք, թէ Աստուծոյ լոյսն Աստուած չէ, ապա եւ զաւրութիւն Աստուած չէ եւ բնութիւն Աստուած չէ[119], ապայ այլ ինչ մնաց Աստուծոյ[120], որ Աստուած լինի. որպէս զՄովսէս[121] ոք բռնէ եւ ասէ՝, թէ Մովսէսի ոտքն Մովսէս չէ, եւ Մովսէսի ձեռքն Մովսէս չէ[122], եւ գլուխն Մովսէս չէ[123], եւ ամենայն մասանցն Մովսէսի զնոյն[124] ասէ, ապա ո՞րն է Մովսէս, զի ոչ ինչ մնաց Մովսէսին, որ այն[125] Մովսէսն լինէր: Արդ, յայտնի է, զի[126] ի մասանցն բոլորն զոյանայ որպէս Մովսէս[127] յոտիցն եւ ձեռացն[128] եւ[129] ի գլխոյն, եւ ամենայն[130] մասանցն. նոյնպէս յԱստուծոյ իմացիր, զի եթէ Աստուծոյ լոյսն Աստուած չէ նոյնպէս եւ[131] զաւրութիւն յայտնի է, որ այլ ոչ ինչ չմնաց ի տեղն, որ այն Աստուած լինէր, որ է մեծ քուֆր:

Արդ, ըստ խոստովանելոյ ձեր գրոցն[132] յայտնեցաւ, որ Քրիստոս Աստուած է: Եւ թէ ասեն, թէ[133] այդ ուժով գրուցէ ցուցուցէք[134] բանիւ, թէ ոնց յԱստուած է, որ ամենայն մարդ հաւանի եւ իւր կամաւ ասէ, թէ Քրիստոս Աստուած է: Ասեմք թէ ամենայն արուեստաւոր, մինչ զիւր արուեստն չէ արարել, ոչ ոք[135] ճանաչէ զնա, թէպէտ եւ[136] անունն կայ ի նմա, իսկ յորժամ հիւսն զուրաքն առեալ զփայտն[137] տաշէ՝ տեսաք եւ ճանաչեցաք, եւ ասեմք նմա, թէ հիւսն է: Նոյնպէս եւ զդարբինն կայծակամբքն եւ կռանաքն, եւ զամենայն արուեսագէտ իւր գործովն ճանաչի[138]: Արդ, նոյնպէս եւ Աստուծոյ արուեստ կա, որ զայն տեսանելով ճանաչեմք զԱստուած: Եւ առ որ ոք ոչ զտանուի յարուեստէն՝ ոչ ասեմք նմա Աստուած: Արդ, արուեստն եւ գործն այս է, որ յոչէից իր զոյացուցանէ եւ զանհնարինն հնարաւոր առնէ, որպէս ի վիմէն ջուր հեան եւ զարարածս[139] յոչնչէ զոյացոյց: Իսկ եթէ այս գործս[140] ի Քրիստոս[141] երեւեալ է[142], ապա Աստուած է: Եւ թէ չէ երեւեալ[143]՝ նոցա ասացուածք[144] է: Եւ ամենայն տիեզերք[145] գիտեն, որ Քրիստոս զկաղն գնացոյց, զկոյրն[146] լուսաւորեաց, զմեռեալն յարոյց, եւ զամենայն անհնարին հնարաւոր արար, ապա ուրեմն, Աստուած ճշմարիտ[147] է: Եւ եթէ ասեն թէ[148] բազումք մարգարէք զնոյն սքանչելիս արարին[149], եւ թէ սքանչելեաւքն Աստուած է, ապա եւ մարգարէքն Աստուած են: Ասեմք թէ եւ մարգարէքն զնոյն արարին[150], այլ ոչ որպէս Քրիստոս, զի Քրիստոս[151] ինքնիշխան[152] զաւրութեամբն առնէր եւ ոչ յայլմէ խնդրէր, իսկ մարգարէքն աղաչանաւք եւ լալով եւ ողբով եւ[153] բազում արտասուաւք խնդրէին, եւ ապայ լինէր: Այլ[154] Աստուծոյ գործ է, որ իւր ծառայովն առաւել առնէ սքանչելիս քան առանձին ինքն վասն յայտնելոյ զանչափ սէրն, որ առ մարդիկք[155], զի զիւր զաւրութիւն շնորհէ մարդկան, որով փառաւորի մարդն: Զոր աւրինակ թագաւոր ոք գործն իւր ծառայովն առնէ եւ ծառային առաւել[156] շնորհէ, զի կցորդեսցի փառաց իւրոց, նոյնպէս եւ Աստուած առնէ, որպէս առաքեալքն

անթիւ մեռեալ յարուցին եւ Քրիստոս՝ երեք: Եւ[157] թէ գիտուն ոք լինի՝ ասեն թէ Քրիստոս զիա՞րդ ի վերայ Ղազարու գերեզմանին յաղաւթս եկաց: Ասեմք, թէ իմացիր զի ոչ որպէս ծառայ[158] աղաւթէր, այլ որպէս սիրելի Որդի գոհանայր զՀաւրէն: Եւ ոչ ասաց Քրիստոս, թէ Կու՛ աղաչեմ, որ դու սքանչելիք առնես, այլ ասաց, թէ՝ «Ես առնեմ»*, զի ցուցէ[159], թէ մին կամք են Հաւրն եւ Որդոյն[160]: Եւ թէ ասեն, թէ յառաջն ասացէր, թէ Աստուծոյ Բանն իւրն Որդին[161] է. եւ հիմայ Քրիստոս մարմնով է, եւ ի կնոջէ ծնեալ է[162]. այս երկուսս ոչ[163] լինի: Ասեմք թէ նոյնն է, որ ասացի բան եւ լոյս[164]. եկն վասն մերոյ փրկութեան մարմին էառ ի Կուսէն եւ ճշմարիտ մարդ եղեւ: Յառաջն անմարմին էր, եւ այժմ մարմնով է յերկինս[165]: Եւ թէ ասեն անաւրէնքն[166]՝ ամենակարաւղ է Աստուած, զամենայն ինչ կարէ առնել առանց մարմին առնլոյ, ինչ հարկ էր Աստուծոյ մարմին առնուլ: Ասեմք թէ կարաւղ է Աստուած զսպտանայ յոչէութիւն փոխել, այլ այս անիրաւութիւն[167] լինէր եւ առանց դատաստանի: Եւ այս էր դատաստան, զի որպէս սպտանայ զմարդն կոխեաց՝ պարտ էր, որ մարդն զաւրանայր եւ զսպտանայ կոխէր: Եւ յԱդամայ որդւոցս ոչ ոք կարաց ընդդիմանալ[168] սպտանայի: Վասն այնորիկ Բանն Աստուած մարմին էառ, եւ մարմնովն կոխեաց զսպտանայ եւ ազատեաց զԱդամ: Եւ զայս[169] հնարիւք. զի թէ սպտանայ գիտացեալ էր, թէ Աստուած էր, որ մարդ է եղեալ, ոչ մերձենայր առ Քրիստոս եւ անկոխ մնայր: Վասն այնորիկ Բանն Աստուած ծածկեաց զինքն մարմնովն որպէս ձկնորսք զկեռն մսով ծածկեն[170], զոր ոչ իմացեալ սպտանայի ըմբռնեցաւ ի Քրիստոսէ, որպէս ձուկն ի կէռէն[171], եւ կոխեցաւ ի նմանէ եւ ազատեցան[172] զերիքն, որ *յեղամայ*: Եւ այսքան պատասխանիս[173] բաւ է վասն Քրիստոսի:

Երրորդ հարցումն. ասեն անաւրէնքն[174], թէ դուք Մահմետայ[175] Փեղամբար չեք ասել, կամ[176] ընդունել, զի Մովսիսի ասէք մարգարէ, եւ չէ պակասութիւն եւ ամենայն մարգարեցին: Արդ, զի՞նչ պակասութիւն ածէ ձեզ, որ դուք նմա մարգարէ ոչ ասեք: Այսմ պատասխանեմք, թէ մեզ[177] չէ արժան նմա[178] մարգարէ ասել[179], վասն Գ (3) պատճառի. առաջինն այս է, որ մեք զի՞նչ գիտեմք, յԱւետարանէն գիտեմք, զոր դուք Ինջիլ[180] ասէք եւ անդից[181] ի դուրս զայլ գիրք ոչ ընդունիմք: Երկրորդ[182], ի յԱւետարանն Մաւսէս եւ ամենայն մարգարէքն գրած են, վասն այնորիկ ընդունիմք եւ հաւատամք, իսկ Մահմէտն ձեր չկայ գրած ի յԱւետարան, զի Ինջիլն Ռ (600) տարով յառաջ է քան զՄահմէտն ձեր, վասն այն չէ գրած եւ իր բանդ չէ գրած[183], մեք ոչ գիտեմք զնայ, եւ թէ եղեալ է ոչ ընդունիմք: Եւ երրորդ պատճառն այս է, զի Մահմէտն ձեր մեզ վրա երախտիք իսկ[184] չունի, զի թէ երէկ զմեզ ի հաւատք գտաւ, եւ մեք աստուածապաշտ էաք, երբ նա երէկ եւ մեզ ոչ ինչ չէ ուսուցեալ եւ ի նմանէ հաւատք չենք առել, վասն այնորիկ ոչ ճանաչեմք զնա, բայց ձեր պարտի[185] նմայ հնազանդիլ, զի զձեզ ի հաւատք երեր եւ[185] ի կռապաշտութենէ դարձոյց[187]: Երրորդ պատճառն այս է, որ սովորութիւն է մարմնաւոր թագաւորաց, որ զփեշռան[188] յառաջ քան զիւրեանց գալն յուղարկեն, եւ երբ թագաւորն եկած լինի այլ[189] փեշռաւի կարիս չկա[190]: Նոյնպէս մարգարէքն, որ յառաջ քան զՔրիստոս եկին փեշռաւն եկին Քրիստոսի, թէ Քրիստոս[191] կու՛գայ, վասն այնորիկ եւ ընդունիմք[192]: Իսկ յորժամ Քրիստոս թագաւորն երկնից եւ զնա տեսաք, այլ չեմք կարիս փեշռաւի, վասն այնորիկ եւ ոչ ընդունիմք զնա[193]:

Չորրորդ հարցումն այս է, թէ ընդէ՞ր ոչ սիւննէթէք[195] զձեզ, զի աւրենք է դրել Աստուած, թէ սիւննէթէք՝ աւրինազանց էք: Առ այս պատասխանեմք, թէ մարդ, որ հարցանէ զայն,

* Յովհ. ԺԱ. 42

պարտ է, որ գիտենայ, թէ Աստուած զսիւնաթն ինչի՞ համար արէնքն եղ, եւ ապա թէ չառնէ[196] ոք՝ պարտապան ոչ լինի արինացն Աստուծոյ[197]: Գիտելի է, զի Աստուած, զայս արենքս մին պատճառի համար եղ[198]. զի[199] յառաջին ժամանակն աշխարհս ամէն[200] կռապաշտք էին, եւ Աբրահամու ազգն միայն էր[201] աստուածապաշտ, վասն այն պատճառին Ռ (2) նշան եղ Աստուած իւր[202] հաւատացելոցն, զի բաժանեսցին[203] ի կռապաշտիցն. մին նշանի ծածուկ[204] մարմինն, եւ ասաց, թէ թլպատէցէք զձեզ, որ կռապաշտքն, անթլպատ լինելով, բաժանեսցին ի ձէնջ: Եւ միւս[205] նշան ի կերակուրն, որք կռապաշտքն գիտոգի միսն ուտէին, ասաց, թէ դուք[206] գիտոգի միսն մի՛ ուտէք, որ բաժանիք ի նոցանէ: Եւ այս արէնքս եկաց մինչեւ ի գալուստն Քրիստոսի: Արդ, յորժամ Քրիստոս եկն եւ զաշխարհս ի կռապաշտութենէ դարձոյց իւր առաքելովքն եւ կորեաւ կռապաշտն: Արդ[207], ո՞յր[208] համար է թլպատիլն, զի ոչ գոյր կռապաշտ, որ բաժանին[209] ի նոցանէ եւ ապա ուրեմն աւելորդ է թլպատիլն, վասն այնորիկ ոչ թլպատիմք: Եւ դարձեալ, քանզի[201] ջհուտ ազգն աստուածապաշտ էր, նոցա արէնքն Աստուծոյ ընդունելի էր[211], հիմա ջհուտն նալլաթ է յամէն ազգի միջի[212], եւ առաւել ի փաճկի մէջն, վասն այնորիկ մեք ուտեմք[213] միս խոզենի եւ ոչ թլպատիմք, զի մի՛ լիցուք ջհուտ եւ նալլաթ[214], եւ այդ բանիդ հիլաթ ասեն, որ զայլ մարդոյ արէնք պահեն ու ասեն կո՛ապտենք[215] զնա, զի ամենայն մարդ իմանայ զայդ[216], թէ ով զջհտի[217] արէնք պահէ ջհուտ է, եւ ով զՔրիստոնէից[218] պահէ՝ քրիստոնեայ է: Եւ այս բանիս համար մեք հետ ջհտին կո՛կռուիմք եւ ոչ հետ ձեզ, զի[219] դուք զնոցա արէնքն կո՛պահէք[220], դուք գիտէք, մեզ հետ ձեզ այլ բան չկա[221]: Բաւ է:

Հինգերորդ հարցումն անաւրինացս, թէ ընդէ՞ր ոչ լուանայաք զձեզ, եւ թէ ոչ լուանայք՝ ջունաթէք[222], զոր ոչ է արէնք:

Այսմ բանի պատասխանի փամք[223] եւ ասեմք հարցանելով, թէ լուանալն վասն մեղացն է, թէ՞ վասն աղբին. թէ վասն մեղացն է՝ զմարմնոյդ թող լուանաս[224], երբ սիրտդ, որ մեղաց տուն է[225], լի է արեամբ եւ դեռ յաւելցնես յամեն աւր[226] զմեղքն եւ ի բաց չթողուս[227]: Զի՞նչ ազուտ է արտաքին[228] մարմնոյ լուանալդ, վասն զի մեղքն աղտ չէ, որ ջրովն լուացուի: Եւ թէ լուանալն վասն աղբին է՝ այդ[229] վասն է՞ր է արէնք գրած եւ անուանած, զի ամենայն մարդ զիւր զարշութիւն կու լուանայ[230], յորժամ կո՛ աղտեղանայ եւ թէ բաղանիս եւ թէ յայլ տեղիս: Եւ դարձեալ ասեմք, թէ լուանալն Աստուծոյ համար է թէ՞ մարդոյ: Արդ, եթէ[231] Աստուծոյ համար է լուանալն՝ Աստուած զդուրս մարմնոյն ոչ տեսանէ, այլ համապազ ի սիրտն հայի[232]: Որպէս ասէ ի Գիրս Թագաւորութեանց[233] թէ մարդ յերեսս հայի եւ Աստուած՝ ի սիրտն*: Եւ դրսուց լուանալն չէ ազուտ սրտին: Եւ թէ այսպէս առնեն, նման են գերեզմանաց, որ վերայ ի երեսն[234] բոով եւ կրով[235] ծեփած է եւ կոկած եւ ներքոյ[236] ժահահոտութեամբ լի է**: Եւ թէ մարդոյ համար լուանան, որ մարդոյ գեղեցիկ երեւին, ապա բոզերն քան զամենն արդար են, որ գիշեր ու ցերեկ[237] կու լուանան[238] զիւրեանց անձինքն: Արդ, յայտ է, որ զսիրտն լուանալ պարտի նախ[239], որ Աստուած ի նմայ բնակէ[240], զի Աստուած զմարդն իւրեանն թախտ ու[241] գահ է շինէր[242] եւ տուն, որ ի մարդոյ սիրտն[243] բնակէ[244], եւ այս յայնժամայն, որ մարդն զիւր սիրտն սրբէ[245] ի մեղաց եւ ազատ լինի յամենայն ծառայութենէ չարեաց, ապայ թէ զարտաքին մարմինն[246] լուանայ ու սրտովն աղտեղանայ չարեաւք՝ նման է յայն մարդոյն, որ թագաւորին համար դարպաս[247] շինէ, զդուրսի դեհին[248] ծեփէ եւ նաղաշքարէ[249] եւ զներսի դեհն աղբով լնու: Վասն որոյ ոչ միայն անշնորհակալ լինի թագաւորն այնպիսոյն, այլ պատուհասէ[250]

* Ա Թագ. Ժ.27:
* * տե՛ս Մտթ. ԻԳ. 27:

եւս: Եւ դարձեալ, թէ ջրոյ լուանալովն արդարանայր[251] ոք, ապայ[252] ձկներդ ամէնն հիմայ[253] արդարութիւն[254] Աստուծոյ կո՛մտանէին[255], որ է կարի անտեղի: Այսքան առ այս[256]:

Վեցերորդ. հարցանեն զմեզ անաւրէնքն, թէ վասն է՞ր յարեւելս ծունր դնէք[257]: Արդ, եթէ յարեւելս ծունր դնէք՝ արեգակնապաշտ էք եւ դեռ եւս ի կռապաշտութիւն էք:

Այսմ[258] պատասխանի տամք եւ ասեմք, թէ արգակն տկար է բնութեամբ[259] քան զմուկն մի, զի մուկն կենդանի է եւ արեգակն ճրագ է անկենդան[260], որ լոյս տայ աշխարհիս՝ շինեալ յԱրարչէն, եւ մեք այդ պատճառիդ համար անարգ համարիմք զնա[261] քան զամենայն կենդանիս: Այլ յարեւելս ծունդր կրկնեմք եւ[262] երկիր պագանեմք վասն բազում պատճառաց[263]. նախ՝ զի ուր թագաւորն է հանապազ[264] անդի գան ծառայքն նորա[265]: Արդ, ծառայք են Աստուծոյ[266] արեգակն եւ լուսին եւ աստեղք յարեւելից գան, վասն այնորիկ երկրպագանեմք գիտելով ի գնացից յաստեղացն, թէ անդ է: Երկրորդ, զի մարգարէն Դաւիթ օրէնք է գրել ասելով՝ «Երկիր պագանիցէք այնմ[267], որ նստի յերկինս յերկնից ընդ արեւելս»*: Եւ մեք ուսեալք ի մարգարէէն երկիր պագանեմք յԱստուծոյ: Եւ երրորդ. զի մեր հայրենիքն՝ դրախտն՝ յարեւելս[266] է, որպէս Մովսէս[267] ասէ ի Թաւրէթն, վասն այնորիկ երկիր պագանեմք Աստուծոյ եւ աղաչեմք դարձեալ զմեզ ի մեր հայրենիքին դանել[268]: Չորրորդ[269]. զի յորժամ համբարձաւ Քրիստոս յերեսն յարեւմուտս էր, եւ առաքեալքն յերկիր պագեցին[270], եւ մեզ աւրէնս գրեցին դէպ արեւելս առաջի Քրիստոսի երկիր պագանել[271]: Հինգերորդ[272]. զի դարձեալ Քրիստոս յարեւելից է գալոց՝ ի դատել զերկրի ամենայն[273]: Վասն այնորիկ ընդ արեւելս երկրպագանեմք[274]:

Եաթներորդ. Հարցանեն զմեզ վասն պահոց, եթէ պահքն ձեր ոչ է պահք, այլ փահրէզ, զի զանուժ[275] կերակուրն ուտէք եւ յամենայն ժամ ուտէք[276]: Վասն այնորիկ ոչ է կատարեալ պահքն ձեր: Արդ, այսպիսի[271] պատասխանի[278] տանք[279] ոչ մեք, այլ առաջին հարքն[280], որք պահեցին Խ (40) աւր անսուաղ: Եւ այս էր[281] դիտաւորութիւն պահոց նոցա, զի առանց կերակրոյ կալով ցամաքեցուցին զմարմինս իւրեանց ի յախտէ պղծութեան[282], որով եւ տուն եղեն Աստուծոյ[283] եւ հաճոյ եղեն կամաց նորա[284]: Արդ, յորժամ մարդ զամենայն անուշ կերակուր ուտէ ի պահոց արտաքին[285] նաւսն[286] զներքին նաւսն շարժէ, եւ յայնմանէ ախտն բազմանայ եւ գործի պոռնկութիւն: Ուստի եւ Աստուած զարշի եւ ոչ հաճի յայնպիսի[287] պահսն: Եւ այս է պահքն ձեր, որ ուտելով զանուշսն[288] ախտավոր լինի[289] եւ հոգին, իսկ մեր պահս[290] սակաւ ինչ նմանի յառաջին նախահարցն պահոց, քանզի ոչ ունիքմ այնչափ զաւրութիւն, որ Ժ (10) աւր կամ այլ աւելի անաթի[291] կարեմք կեալ: Եւ աւրէնք է պահելն. վասն որոյ հնարիմք եւ սակաւ հացով եւ կամ բանջարով եւ աղով զաւուրսն զայնոսիկ անցուցանեմք եւ զայն ի յԹ (9) սահաթ[292] աւուրն: Եւ զայն[293] կերակուրն, որ մեք ուտեմք ոչ համ կայ, եւ ոչ հոտ եւ ոչ զաւրութիւն, այլ զայն միայն առնէ, որ շունչ մարդոյն առ ինքն պահէ[294], եւ ոչ առնէ աւելորդ ախտի, որով եւ պղծի հոգին[295], եւ այսպիսի պահաւք վճարեմք զկեանսն մեր: Այլ եւ այս եւս[296] ի սիրտ մարդոյն թաղուին ունի, զի թէ զսիրտն ոչ[297] սրբէ մարդ ի պահոցն[298]. թէ ամենեին ոչինչ չուտէ, սատանայի է նման, որ[300] ոչ ինչ է[301] կերեալ, բայց ամենայն չարութիւն ի սիրտս[302] նորա տպաւորեալ է, եւ թէ մարդ[303] զամենայն աւուրս պահոցն[304] բանջար[305] ուտէ իշոյն նմանի առանց սրբութեան սրտին որ ուտէ, զի էշն[306] զիւր ժամանակն անեւի խոտ է կերեալ եւ ոչ է թաթախեալ ի թան եւ ի միս, նոյնպէս եւ մարդ[307] թէ զամենայն անուշ կերակուր

* Սաղմ. ԿԷ 34:

ուրէ եւ ոչ հեռանայ ի մեղացն, նմանի շան եւ գազանի[308] եւ գայլոյ[309], որ այլ ոչ ինչ իրաւք ոչ մխիթարի, բայց միայն մսովս[310], իսկ զբերանն պահելով, որ հարկաւորն է ի զգայարանսն[311], առանց որոյ ապրիլն անհնարին[312] է մարդոյ, զոր եւ պահելովն ուսանիմք, եթէ զամենայն զգայարանսն եւ զանդամս մարմնոյ պարտ է նոյնպէս[313] պահելն, յուսդի յայտնի լինի թէ զինչ է պահքն, որ է մեռելութիւն մարմնոյ, զի «որքան արտաքին մարդս մեր ապականի, ներքինն նորոգի աւր ըստ աւրէ»* ասէ առաքեալն Պաւղոս[314]: Զայս չափաւոր խաւսս ընկալջիր անթերի մտաւք, եւ տուք պատասխանի հակառակորդացն ձեր՝ ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ[315] աւրհնելոյն յաւիտեանս[316]:

ՏԱՐԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Բ Վասն հարցմանց անաւրինաց եւ զանազան պատասխանիք, զոր խնդրեալ բարեպաշտին Աբիսողոմայ եւ պատասխանեալ վարդապետին Մատթէոսի, Գ Մատթէոս վարդապետի վասն հարցմանց անօրինաց զանազան պատասխանիք, զոր խնդրեալ բարեպաշտն Աբիսողոմ մեծ տանուտէրն Շիրանայ:

1 Բ Գիրս: 2 ԱԲ խնդրէ: 3 ԱԲ չիք որ է... ձերոյ: 4 ԱՀ չիք զայս: 5 Ա պատասխանին: 6 ԱԲ են փխ. իցեն: 7 Բ նախապանաւք: 8 Բ ժամանակ: 9 ԱԲ որ: 10 Բ բարեաց: 11 Ա ժամանակս: 12 Ա հերձուածողացն: 13 Բ Կերենթոսի: 14 Բ անձնաւորութիւն: 15 Գ զմահ մեր փխ. զինքն: 16 Բ որոյ եւ բազմացն սակաւ մի գրեցի փխ. յորոց գրեցիցս: 17 Գ պատասխանին: 18 ԱԲ չիք զոր արարաք... վասն այն գրեմք: 19 Ա Հարցումն. Առաջին հարցումն: 20 Բ Առեալ ասեն: 21 ԲՀ չիք պատասխանի: 22 Գ չիք եւ: 23 Բ պատասխանիս տացուք: 24 ԱԲ զայս: 25 Բ այտ հերձուածոյտ: 26 Բ մեր փխ. ի մերս: 27 Բ այլ: 28 Գ ընկալեալ փխ. անցեալ: 29 Բ առեալ լինի: 30 ԱԲ առանց կնոջն փխ. մարդոյն... 31 ԱԲ լինի: 32 ԱԲ Աստուծոյ ամենայն: 33 ԱԲ չիք Աստուծոյ: Բ 34 չիք որդի: 35 ԱՀ չիք հաւր: 36 ԱՀ դատաստան: 37 ԱՀ արուեստաւորք չիք արուեստք: 38 ԱՀ հայր: 39 ԱՀ մարդն փխ. մարդս է: 40 Բ նմանէ: 41 Գ այլ փխ. Աստուծոյ: 42 Բ չիք արարն զքեզ եւ: 43 Գ չիք զքեզ...զքեզ: 44 Բ ի հաւրէն եւ ի մաւրէն: 45 Գ այս է փխ. այսինքն: 46 ԱՀ մարդոյ նմանի: 47 Բ մտաց եւ բանի: 48 ԱԲ չիք վասն որոյ...նմանի: 49 ԱԲ կռապաշտն այլ (Ա չիք այլ) զի: 50 Բ չիք այլ ամենայն...բանական լինել: 51 Ա չիք բան: 52 Բ Եւ զայս: 53 Ա պատճառի: 54 Բ չիք մարդոյ: 55 ԱԲ կո՛դառնայ: 56 Գ յաւդտ: 57 Գ եւ այլ փխ. Իսկ: 58 Բ յարարածոց ոչ որ: 59 Ա ոչ գիտաց: 60 Գ հրեշտակ: 61 ԱԲ այսորիկ: 62 Գ այն: 63 Գ գրութիւն փխ. գրաւի: 64 Բ չիք ապա: 65 Ա չիք եւ: 66 Բ ինչ: 67 Բ Աստուծոյ բանն, Գ չիք Աստուծոյ: 68 Բ իւր: 69 ԱՀ չիք զաւրութիւն եւ: 70 Ա ի ծոց իւր առնուլ: 71 Բ չիք եւ: 72 ԱԲ ջուրն: 73 ԱԲ շողս (շող) նորագոյնս: 74 Գ մարդոյն: 75 Գ չիք Որդի: 76 Ա ասաք: 77 Գ զայս այլ: 78 Գ կամիս փխ. պարտ է: 79 Գ ուսանիլ: 80 ԱԲ մեռած է փխ. ոչ է կենդանի: 81 ԱՀ չիք նոյնպէս եւ...չէ կենդանի: 82 Գ չիք եւս: 83 Բ ոչ փխ. եւ: 84 Գ յիրմանէ: 85 Ա որպէս փխ. սոյնպէս: 86 Բ չիք սոյնպէս եւ Հոգին...անբաժանելի է: 87 Գ այս: 88 Բ բան: 89 ԲՀ ծնուցեալ: 90 Բ բուխտան: 91 Գ զիւր փխ. զիւր բան: 92 ԱՀ չիք Եւ այսպէս... շատ են: 93 Բ չիք եւ զայս, որ յանձն...այլ: 94 ԱԲ որպէս մարդն հոգին եւ բանն երեք են եւ մի փխ. եւ զայս, որ ասեմք...երեք են եւ մի: 95 Բ է

* Բ Կորնթ. Դ.16:

արեգակ: 96 C չիք կամ: 97 AB չիք եւ: 98 A չիք են: 99 AB յարարածքս: 100 C ցուցաք: 101 A աստուածեղէն: 102 B չիք աստ: 103 B ճանձրութիւն փիս. փաղփկութիւն: 104 C ժամանակս չէ գրելոյ փիս. ժամանակիս չէ գործ: 105 A հարցանելն: 106 C ~~ամենայն~~ ասեմք: 107 A գիրն, B գիրքն: 108 B մուսափն, C մոհաւն: 109 A քաշիմաթու, B քաշիմաթաւհու: 110 A ստեղծեալ, B լոյս է ստեղծել: 111 C հոգիք: 112 C չիք լուս: 113 B կայ: 114 B ստեղծածն: 115 B սոքա եթէ: 116 AC չիք Իսկ եթէ սոքա... խիստ, B լուս են, որ է խիստ քուփր փիս. լոյս տուել...խիստ: 117 C լոյսն: 118 C չիք թէ: 119 AC չիք ապա եւ... Աստուած չէ: 120 A չիք Աստուծոյ: 121 C Մովսէս: 122 C չիք Մաւսէսի ձեռքն...չէ: 123 AC չիք եւ գլուխն...չէ: 124 B այսպէս փիս. զնոյն: 125 B որի յայն փիս. որ այն: 126 B որ: 127 AC չիք Մովսէս: 128 C ձեռիցն: 129 B չիք եւ: 130 C յայլ փիս. ամենայն: 131 C եւ նոյնպէս: 132 B գրեցան փիս. գրոցն: 133 AB չիք թէ: 134 B ցուցէք: 135 A չիք ոք: 136 B ոչ ճանաչի նա թէ եւ փիս. ոչ ոք... թէպէտ եւ: 137 B առեալ զուրաքն առեալ զուրաքն փիս. զուրաքն ... զփայտն: 138 C ճանաչեմք: 139 C զարարածքս: 140 C գործքս: 141 B չիք ի Քրիստոս: 142 C երեւեցուցեալ: 143 C երեւեցեալ: 144 C ասացուացքն: 145 C տիեզերս: 146 B զկուրն: 147 AB ճշմարիտ Աստուած է: 148 BC չիք թէ: 149 A սքանչելիքն արարեալ են: 150 C արարին զսքանչելիքն: 151 BC չիք Քրիստոս: 152 C ըստ ինքնեան փիս. ինքնիշխան: 153 C չիք ողբով եւ: 154 C այլ եւ: 155 C մարդիք: 156 C աւելի: 157 B չիք եւ: 158 B չիք ծառայ: 159 B ցուցիչ: 160 C Իսկ եթէ ասեն. Քրիստոս ի վերայ Ղազարու աղաւթէր, ապա նման է մարգարէիցն, ասեմք. ուստ բանից աղաւթիցն Քրիստոսի, զի ասէր, թէ Դու արա, զի ցուցցէ: 161 C որդի: 162 A չիք է: 163 C չիք ոչ: 164 C լուս: 165 C աւելի փիս. յերկինս: 166 C աւրէնքն փիս. անաւրէնքն: 167 A անաւրէնութիւն փիս. անիրաւութիւն: 168 C դիմանալ: 169 C այս: 170 AB չիք ծածկեն: 171 C կռեն: 172 C ազատեացն: 173 C չիք պատասխանիս: 174 B այլազգիքն փիս. անաւրէնքն: 175 AB Մահմատայ (այսպես եւ այլուր): 176 B եւ փիս. կամ: 177 C չիք մեզ, չէ մեզ: 178 C որ նմա: 179 C ասեմք: 180 B ինճիլ: 181 B անդի: 182 C Արդ փիս. Երկրորդ: 183 B չիք եւ իւր բանդ չէ գրած: 184 C ի մեզ ոչ ինչ երահտրիք փիս. մեզ վրա ... իսկ: 185 BC արժան է փիս. պարտի: 186 B չիք եւ: 187 C չիք դարձոյց: 188 A զիշռաւն, B զփեղռովն: 189 C այս փիս. այլ: 190 C կարծիս չկենան փիս. կարիս չկա: 191 C նա փիս. Քրիստոս: 192 A չիք եւ ընդունիմք, B չիք վասն այնորիկ եւ ընդունիմք: 193 B չիք զնա: 194 C չիք այս է: 195 B սունաթէք (այսպէս եւ այլուր): 196 A չառնեն: 197 C չիք Աստուծոյ: 198 B եդիր: 199 C չիք զի: 200 C Աբրահամու ազգին, զի աշխարհս ամէն բոլոր փիս. աշխարհս ամէն: 201 C մինակ փիս. միայն էր: 202 B չիք իւր: 203 C բաժանեսցի: 204 C չիք ծածուկ: 205 C մին: 206 B չիք դուք: 207 A չիք Արդ: 208 B այլ ում փիս. ոյր: 209 C բաժանեսցին: 210 B չիք քանզի: 211 B Աստուած ընդունէր փիս. Աստուծոյ ընդունելի էր: 212 B ամէն ազգի նալլաթ է փիս. նալլաթ է ... միջի: 213 B ունիմք փիս. ուրեմք: 214 A նալաթ: 215 C ասենք փոխ. ասենք: 216 AB զայս: 217 AB զջիտին: 218 A զքրիստոնէին, C Քրիստոսին փիս. զ-Քրիստոնէից: 219 B թէ փիս. զի: 220 B պահէք: 221 AC մեր այլ բան չկայ հեստ ի (A չիք ի) ձեզ փիս. մեզ ... չկա: 222 B ջունուրպէտրք փիս. ջունաթէք: 223 B Այսպէս պատասխանեմք փիս. Այսմ բանի... տամք: 224 B կո՛լուանաս: 225 A տունն փիս. տուն է: 226 B յամէն աւր յաւելցնես: 227 A տթողուլ, C չես թողեալ փիս. տթողուս: 228 C եւ արտաքին, B արտաքոյ: 229 B այս: 230 A լուանայ: 231 B չիք եթէ: 232 AC հանապազ զսիրտն փիս. ի սիրտն հայի: 233 B Թագաւորութեանց ասէ: 234 B վերին երեսն: 235 B փուռնկով փիս. բռով եւ կրով: 236 B երբ բանան փիս. եւ ներքոյ: 237 C

ցորեկ: 238 AC լուանան: 239 A պիտի լուանալ, B պիտի լուանալ փխ. լուանալ... նախ: 240 B բնակի: 241 AC չիք ու: 242 A զահ է շինել: 243 B սրտումն փխ. սրիտն: 244 B բնակի: 245 AC սուրբ է փխ. սրբէ: 246 B մարմնոյն: 247 AC դարպաս: 248 C դիհն (այսպէս եւ այլուր): 249 AC նախշէ փխ. նաղաշքարէ: 250 B այլ եւ պատուհաս եւ: 251 B արդարանայ: 252 AB ապա հիմա: 253 A չիք հիմա: 254 AC արքայութեան: 255 A արժանի պիտէին, C արժանի էին փխ. կու՛ մտանէին: 256 B չիք Այսքան առ այս: 257 B անէծք (այսպէս եւ այլուր) փխ. դնէք: 258 B Այս: 259 B զարութեամբ: 260 B անկենդան ճրագ է: 261 B չիք զնա: 262 AC չիք ծունր կրկնեմք: 263 AC պատճառի: 264 B չիք հանապազ: 265 AB նորա հանապազ: 266 C յարեւելս: 267 C ասէ Մովսէս: 268 C եւ աղաչեմք դարձեալ զմեզ ի մեր հայրենիքն տանել փխ. Եւ երրորդ ... տանել: 269 B Երրորդ փխ. Չորրորդ: 270 C երկրպագին փխ. յերկիր պագեցին: 271 AC չիք դէպ արեւելս... պագանել: 272 A Չորրորդ փխ. Հինգերորդ: 273 A զտիեզերս փխ. զերկիր ամենայն: 274 B չիք Հինգերորդ, զի դարձեալ... երկրպագանեմք: 275 AC անուժ: 276 B չիք եւ յամենայն...ուտէք: 277 B չիք այսպիսի: 278 B պատասխան: 279 AC տան: 280 AB նախահարքն: 281 AC է: 282 B պղծութենէ: 283 C չիք Աստուծոյ: 284 B Աստուծոյ փխ. նոքա: 285 C եւ արտաքին: 286 A չիք նաւֆան, B նաւֆան փխ. նաւսն (այսպէս եւ այլուր): 287 B այնպիսի: 288 A զանոյշսն, B զանուշ կերակուրն փխ. զանուշսն: 289 B ախտանայ փխ. ախտաւոր լինի: 290 C մեք պահքս փխ. մեր պահս: 291 B չիք անաթի: 292 B ժամ փխ. սահաթ: 293 AC այն: 294 AC մնաց փխ. պահէ: 295 B հոգին պղծին (չիք եւ): 296 B այլն փխ. այս եւս: 297 C սրբէ ոչ: 298 B ի պահոցն մարդ: 299 B զկանոնք մեր, C զկեանս փխ. զկեանս մեր: 300 AC այս փխ. որ: 301 B չէ: 302 A սիրտն: 303 AC չիք մարդ: 304 B պահեցին: 305 B բանճար: 306 AC սրտի մեր պաւզի (A չիք պաւզի) զայն նմանի, որ ուտէ, զի էշն: 307 AC չիք եւ մարդ: 308 AC չիք զազանի եւ: 309 AC զայլու: 310 B մսով: 311 B զզայարանն: 312 B անհնար: 313 AB նոյնպէս պարտ է: 314 B չիք Պաւղոս: 315 A չիք Աստուծոյ մերոյ: 316 B ամէն փխ. Աստուծոյ ... յաւիտեանս: